Արձանագրություն 5

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով Դեղորայքի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Վեդի

06. 02.2025թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Ս. Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն
Անդամներ
Ա. Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ
Հ. Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցների, չկայացած չափաբաժինների մասին

(Ս. Խաչատրյան)

1.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից համակարգի միջոցով գնահատվել են բավարար:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

«ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով կազմակերպված ԷԱՃ ընթացակարգում ընտրված մասնակիցներ ճանաչել

- **«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ին - **1-ին, 17-րդ, 33-րդ և 34-րդ** չափաբաժինների մասով,
- **«Տոնուս-Լես» ՍՊԸ**-ին - **25-րդ, 26-րդ և 27-րդ** չափաբաժինների մասով,
- **«Արֆարմացիա» ՓԲԸ**-ին - **3-րդ, 30-րդ և 31-րդ** չափաբաժինների մասով,
- **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ**-ին - **2-րդ, 19-րդ և 23-րդ** չափաբաժինների մասով,
- **«Արմենֆարմ» ՍՊԸ**-ին - **32-րդ** չափաբաժնի մասով,

որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

1.2 **ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/11 ծածկագրով գնման ընթացակարգի չկայացման վերաբերյալ**

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/11 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած 4-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ, 20-րդ, 24-րդ և 28-րդ չափաբաժինների մասով՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով, ինչպես նաև հայտարարել չկայացած 5, 8, 9, 11, 12, 13, 14, 15, 16, 18, 21, 22-րդ և 29-րդ չափաբաժինների մասով՝ հայտերի բացակայության հիմքով՝ վերոնշյալ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և անգործության ժամկետի մասին

(Ս. Խաչատրյան)

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո մասնակիցներին սահմանված կարգով կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս.Խաչատրյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Սիմոնյան**

_____ **Հ.Գաբրիելյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ.Բազիկյան**